



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ N 1389/02/10թ.  
Նախագահող դատավոր՝ Հ.Աբրահամյան

Քաղաքացիական գործ N 1389/02/10թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

15-ին մարտի 2011թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով՝

Նախագահությամբ՝ դատավոր  
Դատավորներ՝

Գ.Գրիգորյանի  
Կ.Ղարայանի  
Զ.Օհանյանի

Քննելով ըստ դիմումի Լաուրա Նորիկի Վարդանյանի՝ ժառանգությունը փաստացի ընդունելու մասին քաղաքացիական գործով Կայծեր Բաբայանի ներկայացուցիչ Ռաֆիկ Ավանեսյանի վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Լաուրա Նորիկի Վարդանյանը խնդրել է իրեն ճանաչել իր ծնողների թողած ժառանգությունն ընդունած ժառանգ: Ժառանգական զանգվածի մեջ մտնում են ԼՂՀ Մարտունու շրջանի Նորշեն համայնքում գտնվող բնակելի տունն ու 290քմ մակերեսով տնամերձ հողամասը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2010թ. հոկտեմբերի 27-ի վճռով դիմումը բավարարվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի կազմը նախագահող դատավոր Հ.Աբրահամյանի 2011թ. հունվարի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Կայծեր Բաբայանի ներկայացուցիչ Ռաֆիկ Ավանեսյանը:

ԼՂՀ Գերագույն դատարանի 22.2.2011թ. որոշմամբ Ռ.Ավանեսյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է դատարանի վարույթ:

Վճռաբեկ բողոքին 2011թ. մարտի 2-ին պատասխան է ներկայացրել Լ.Վարդանյանի ներկայացուցիչ Ա.Հովսեփյանը:

## **2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոնշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ, 1226-րդ և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ և 93-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր: Սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածը:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը գործին մասնակից չի դարձրել Կայծեր Բաբայանին և վճիռ է կայացրել նրա իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, որը 1998թ-ից մինչև հիմա, այսինքն ավելի քան տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ փաստացի տիրապետում է վիճահարույց բնակելի տունն ու տնամերձ հողամասը որպես սեփական գույք, այն ենթարկել է կապիտալ վերանորոգման և այդ գույքի նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան, այսինքն դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Բողոք բերած անձը խնդրել է վերացնել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. հունվարի 24-ի որոշումը:

Բողոքաբերը միաժամանակ խնդրել է ազատել պետական տուրքի վճարումից՝ նյութական ծանր վիճակից ելնելով:

### **2.1.Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Վճռաբեկ բողոքին պատասխան ներկայացրած անձը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Ստորադաս դատարանը բողոքարկվող որոշմամբ նյութական կամ դատավարական իրավունքի նորմեր չի խախտել, Կ.Բաբայանը սույն գործով կողմ չի հանդիսանում ու ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի ուժով վերաքննիչ բողոք բերելու իրավունք չունի:

Ա.Հովսեփյանը խնդրել է վճռաբեկ բողոքը մերժել ամբողջությամբ և օրինական ուժ տալ բողոքարկվող որոշմանը:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2010թ. հոկտեմբերի 27-ի վճռով բավարարվել է Լատուրա Նորիկի Վարդանյանի դիմումը և նա ճանաչվել է ծնողներ՝ Նորիկ Վարդանյանի /մահացած 19.8.1991թ./ և Նինա Վարդանյանի /մահացած 28.12.1993թ./ մահից հետո նրանց թողած ժառանգությունը՝ ԼՂՀ Մարտունու շրջանի Նորշեն գյուղում գտնվող սեփականության իրավունքով գրանցված բնակելի տունը տնամերձ հողամասը փաստացի ընդունած:

2. Ըստ գործի նյութերի Կայծեր Բաբայանի ընտանիքը 1998թ-ից բնակություն է հաստատել վիճելի տանը, բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ փաստացի տիրապետում է

վիճահարույց տունն ու տնամերձ հողամասը, հարկեր է վճարում, տունը ենթարկել է վերանորոգման:

#### **4. ԼՂՀ Գերագույն դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նշված հոդվածի մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, բեկանում է վերանայվող դատական ակտը, և բավարարում վճռաբեկ բողոքն այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն էական են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, և երբ վերանայվող դատական ակտն անհիմն և անօրինական է, և կայացվել է դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն նաև գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, վերաքննիչ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը Կ.Բաբայանի ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանի վերաքննիչ բողոքը վերադարձել է այն հիմքով, որ բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի, պատճառաբանությամբ, որ Կ.Բաբայանը վիճելի գույքի նկատմամբ որևէ իրավունք չունի ու ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հոկտեմբերի 27-ի վճիռը չի կարող ազդել նրա իրավունքների և պարտականությունների վրա, ուստի նա վերաքննիչ բողոք բերելու իրավունք չունի:

ԼՂՀ Գերագույն դատարանը սույն գործի նյութերով, մասնավորապես Նորշեն գյուղական համայնքի ղեկավարի 7.10.2010թ. թիվ 151 տեղեկանքով, համայնքի բնակիչների ստորագրություններով հաստատված է համարում, որ Կայծեր Բաբայանի ընտանիքը 1998թ-ից բնակություն է հաստատել վիճելի տանը ու բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ փաստացի տիրապետում է վիճահարույց տունը ու տնամերձ հողամասը, հարկեր է վճարում, տունը ենթարկել է վերանորոգման:

Նման հանգամանքներում Գերագույն դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածը, քանի որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հոկտեմբերի 27-ի վճիռը ազդել է Կ.Բաբայանի իրավունքների և պարտականությունների վրա, ուստի նա վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի ու ստորադաս դատարանը սխալ է հանգել այն հետևության, որ նշված վճիռը չի կարող ազդել Կ.Բաբայանի իրավունքների և պարտականությունների վրա:

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի մյուս պատճառաբանություններին չի անդրադառնում, քանի որ դրանք վերաբերում են գործի փաստական հանգամանքներին և վերաքննիչ բողոքը վերադարձնելու հետ որևէ կապ չունեն:

Քննարկելով բողոքաբերի միջնորդությունը պետական տուրքի վճարումից ազատելու մասին, դատարանը արձանագրում է, որ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի գանձումը «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ կետով և 253-րդ հոդվածի 2-րդ մասով, ԼՂՀ Գերագույն դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց ՝**

1. Կայծեր Բաբայանի ներկայացուցիչ Ռաֆիկ Ավանեսյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. հունվարի 24-ի որոշումը վերացնել և գործն ուղարկել նույն դատարան:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում ընդունման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**Նախագահող՝**

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Դատավորներ՝**

**Կ.ՂԱՐԱՅԱՆ**

**Զ.ՕՀԱՆՅԱՆ**